ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3
(374 10) 59-96-68

05.05.2026

**Ն/ 14.3/10807-2026**

**ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղար**
**ՏԻԿԻՆ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**

**Հաշվետվություն**

2026 թ. փետրվար-ապրիլ ամիսներին կատարված աշխատանքների

ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունում որպես փորձագետ հաշվետու ժամանակահատվածում՝

1. Մասնակցել եմ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Տեղ, Տաթև համայնքներում հուշարձանների պահպանության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության մոնիթորինգի աշխատանքներին:

2. Մասնակցել և աջակցել եմ ՀՀ Սյունիքի մարզի հուշարձանների պետական հաշվառման և փաստագրման աշխատանքներին, ներկայացրել եմ առաջարկություններ բնակավայրերի վարչական տարածքներում նոր հայտնաբերված հնագիտական օբյեկտներին հուշարձանի կարգավիճակ տրամադրելու համար:

3. Իրականացրել եմ շրջայցեր Սյունիքի մարզի համայնքների վարչական տարածքներում հուշարձանների պահպանվածության վիճակը պարզելու նպատակով:

4. Հետևել եմ հուշարձանների պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման աշխատանքներին:

5. Իմ իրավասության շրջանակներում համագործակցել եմ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման և իրավապահ մարմինների հետ:

Կատարող՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության
փորձագետ՝ Գագիկ Նավասարդյան հեռ.՝ (+374) 010599699 (ներքին՝ 690), 093057195

6. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների վարչական տարածքներում հողերի նպատակային նշանակության փոփոխությունների, համալիր փորձաքննությունների և ՇՄԱԳ հաշվետվությունների վերաբերյալ ներկայացրել եմ համապատասխան կարծիքներ:

7. Տրամադրել եմ մասնագիտական կարծիք ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հուշարձանների, դրանց պատմական միջավայրի, վերականգնման աշխատանքների, հնագիտական հուշարձանների և մշակութային շերտերի վերաբերյալ հարցադրումներին:

8. Մասնակցել եմ հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթացներին:

9. Ուսումնասիրել և ներկայացրել եմ առաջարկություններ ու կարծիքներ մարզի բնակավայրերի (Իշխանասար, Լծեն, Շինուհայր, Հարժիս, Անգեղակոթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում հուշարձանների տարածքների և պահպանական գոտիների սահմանների տեղադրվածության անճշտությունների ուղղումների վերաբերյալ:

10. Մասնակցել եմ հուշարձանների և նրանց պահպանական գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ անօրինական աշխատանքների դադարեցման գործընթացներին:

11. Ներկայացրել եմ նորահայտ և վտանգված հնագիտական օբյեկտների անհրաժեշտ փրկարարական պեղումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ:

12. Ապահովել եմ Շենաթաղ բնակավայրում պատահական հայտնաբերված նորահայտ հնագիտական օբյեկտների պահպանությունը մինչև հնագիտական ուսումնասիրությունների մեկնարկը:

13. Կատարել եմ հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, օգտագործման բնագավառում պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության ղեկավարության կողմից տրված այլ հանձնարարականներ:

**Պատմության և մշակույթի հուշարձանների**

**պահպանության վարչության փորձագետ՝ Գագիկ Նավասարդյան**

Կատարող՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության
փորձագետ՝ Գագիկ Նավասարդյան հեռ.՝ (+374) 010599699 (ներքին՝ 690), 093057195